

dem ratione Sampson Dalila [iuxta textum Hebr Delilah] tanquam serpente morsus corruit, atque una cum eo populus Israël, qui a Sampson veluti equus ferebatur, donec iterum divina virtute corroboratus, ultionem de Philistenis iure ac meritoque sumpsit.

սոն սաստիկ Հարուածս ածի վերայ պատերազմողացն. որոյ և վախճան կենաց իւրոց եւս դառնալոյն եղև թշնամեացն ըստ զգտան. բազմունին...

ՄՈՒՃԱՆԻ ԶԱՎՐՄԱՆԱԼ ԳԱԽԱՐԸ

(Աշխարհային - Պատմական ուսումնասիրություններ)

(Շար. տես Բազմ. 1923 էջ 858)

Ե.

Զգեստ և զարդ. — Տղամարդկանց զգեստը. — կանանց զգեստը. — Գլխի յարդարանք և զարդեր:

Ընդհանրապէս Զահարմահայացի տղամարդը հագնուում, զարդարուում է ճիշտ պարսկի նման և նրա նման էլ մագերը շինուում ու ածիլուում, այնպէս որ տիպիկ Զահարմահայացի հային կարելի է գանազանել միայն դիմագծից: Այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ պարսկական վարք ու բարքը, սովորութիւնները խորամատ են ձգել նրա կեանքում: Ընդհակառակը, դրա փոխարէն, կանայք մինչև այսօր էլ սրբութեանը պահել — պահպանել են իրենց հայկական նախնին, տիպական զգեստը, որը ձևում և կարում են հենց իրենք՝ կանայք:

Առաստարակ ունեւոր կանայք երկու, երեք ձեռք չոր են կարում, իսկ միջակներն ու աղքատները՝ մի կամ երկու: Վերջիններս մինչև որ իրենց հագի չորը չի մշտում՝ նորը երբեք չեն կարում: Լւանում են երկու շաբաթը կամ ամիսը մի անգամ: Այժմ ծանօթանալով թէ՛ տղամարդկանց և թէ՛ կանանց զգեստների հետ:

Տղամարդկանց զգեստը

Շապիկ. — Տղամարդու շապիկը շատ երկար է, հասնում է մինչև ազդրերը. կարում են՝ հարուստներն ու միջակները միջալից կամ չլարից, իսկ աղքատները՝ կտակից. բացւում է ալ ուսի վրայից մինչև կուրծքը. և ունի երկու կոճակ, մէկն ուսի վրայ, իսկ միւսը՝ կրծքի. կամ բացւում է կոկորդի տակից մինչև պորտը և կոճակում է 4-6 կոճակներով. թեւերը լայն են (մի թզաչափ), և երկար, հասնում են մինչև թաթերը:

Ոլորջոր կամ փոխնորդ (տումբակ). — Սա երեք քառորդ զաղ չափութիւն ունի և իշնում է մինչև ոտաթաթը. վերին ծայրը դարձած է, որի միջով անց են կացնում երկու կողմերը փնջերով զարդարած, բամբակից կամ բրդից

Զունենալով առջեւ այս կտորներուն Յոյն Շղթայից բնագիրը և դիւրամատչելի չլլալով մեզ հեռաւորութեան պատճառով՝ կը շատանամ լատինական թարգմանութիւնը դնելով, միակ նպատակ ունենալով հոս ցուցնել հանրութեան՝ թէ յանուն Եւսեբեայ հասած են մեր Շղթաներէն զուրս զեռ ուրիշ հատակոտորներ ալ այն զրքէն՝ զոր միայնամբ ցարդ աւանդութիւնը և քանի մը ձեռագիրք Ս. Կիրիլի կ'ընծայէին: Ընթերցողը յայտնի տեսաւ թէ հայկական բնագիրը միշտ ընդարձակ և լրացուցիչ է, ինչպէս էր հայ Շղթաներու նկատմամբ:

Մի միայն այս Դ. Օրինակին հայկականը թէ՛ համաոտ կ'անցնի և թէ բաւական տարբերութիւն կայ. պատճառն է ըստ իս՝ որ մեր թարգմանութիւնը իւր վերջին մասերուն մէջ քիչ մը կ'անապարէ և կը սղէ:

Նոյնպէս նաեւ Բ. վկայութեան վարը եռյե մը դրուած է, որուն Հայերէնը չգտայ և արդէն յայտնի կը տեսնուի որ աւելորդ կրկնութիւն մ'է Բ. օրինակին:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Շարունակի

Ձի՞ կամք, զի՞ կաղամբ. ամն սլացաւ, ի բաց թռեաւ: Փուկասցո՛ւք արագեացուք. երագուկեալք ընթացից բարեաց գործոց դարման տարցուք սրուկեան Ժաւնանակի:

(Տար. Առաք)

գործւած խոնջանք, որ կապում են առջևից. հարուստները կարում են դաբիթից կամ սև կտորից, միջակները՝ կապոյտ միջխալից, իսկ աղքատները՝ կապոյտ կտաւից:

Ալիադուխ (Ալիադուխ)։ -- Հագնում են շապկի վրայից, իշնում է ծնկներից չորս մատ ցած. ունի մինչև արմուկը կարած լայն թևեր, իսկ նրանից ցած՝ մինչև թաթերի երեսը բաց է. երկու կողմերին կան գրպաններ «ճագեր»։ մի գրպան էլ կայներսի կողմը, ձախ կրծքի վրայ, որին «ծոցանեպ» են ասում. աղքատները կարում են հասարակ քաթանից, միջակները՝ շաւիք, իսկ հարուստները հագնում են եագտի մետաքսեայ արխալուզ:

Կապա. — Արխալուզի վրայից հագնում են կապա, որ հասնում է ծնկներից ութը մատ ցած. կոճկում են փորի վրայ «ղէթանէ» կոճկով. թևերը մինչև արմուկը կարած են, իսկ նրանից ցած՝ կանգունի վրայից կոճկում է 4-5 կոճկաներով: Ընդհանրապէս կապայի եզրները կարում են ղէթան կամ քօբայ, իսկ թևերի տակ ծակ են բանում, որպէս զի օդ խաղայ և չքրտնեն. աղքատները կարում են կապոյտ կամ սպիտակ կտաւից, միջակները՝ նոյն գոյնի միջխալից, իսկ հարուստները՝ դաբիթից, մահուղըզկեանից, զադաքից, մախմալից (թաւից), մահութից, շալից, ֆասօնիայից և այլ թանկագին կտորներից:

Փատիք. — Կապայի վրայից փաթաթում են գօտին, որ ունի մի զազ լայնութիւն և 3-6 զազ երկարութիւն. աղքատները կարում են հասարակ կտաւից կամ միջխալից, միջակները՝ եագդից, իսկ հարուստները փաթաթում են հասարակ բամբակեայ շալ կամ մասխաթի (եագդի մետաքսեայ) գօտի, որի արժէքն է 6-10 թուման: Սովորաբար գօտին մի քանի անգամ մէջքին փաթաթում են, ապա առջևից հանգոյց «գուն» են տալիս, յետոյ ծայրերն ամրացնում են կողմերին:

Քուլադա. — Հագնում են ձմեռ ժամանակ, կապայի վրայից, որ հասնում է մինչև ծնկները. կարում են հասարակ բրդեայ կտորներից կամ կապոյտ ու սև բաղալից. մէջքի տեղը զարդարած է մանր ծալքերով, որոնց «չին» են ասում. չինիի շուրջը կարում են «ղէթանեք»։ Քուլադա հագնում են ընդհանրապէս միջակներն ու աղքատները:

Սարկարի. — Ձմեռ ժամանակ, կապայի վրայից հագնում են սարկարի, որ հասնում է մինչև ծնկները. կարում են ֆասօնիայից, սև մահութից և այլ թանկագին կտորներից: Հիշտ

վերարկի ձև ունի: Ընդհանրապէս հագնում են հարուստները, երբեմն էլ միջակները:

Արա. — Ձգում են քուլաշայի վրայից. ծածկում է ամբողջ շորերը և հասնում է մինչև ոտները. հարուստները կարում են բրդից, իսկ միջակներն ու աղքատները՝ բամբակից, գոյնը սև է կամ դեղին: Ընդհանրապէս գործածում են ծերերը:

Չուխա. — Սա ճիշտ բայի նման է, բայց նրանից աւելի բարակ է. ձգում են քուլաշայի վրայ, ամառ ժամանակ: Սովորաբար երիտաւսարդներն իրենց չուխայի թևերն ու օձիքը զառով զարդարել են տալիս. գոյնը ճերմակ է կամ սև. գործածած է բրդից և 3-20 թուման արժէք ունի:

Դոպա. — Գլխերին դնում են գդակ. հարուստներն ու միջակները պատրաստում են քուլիքից, իսկ աղքատները՝ բրդից. դա կլոր է և ունի 3-4 մատ բարձրութիւն:

Կոլիկ. — Ձմեռ հագնում են բրդէ գուլպայ և հասարակ կոշիկ, իսկ ճանապարհորդութեան ժամանակ՝ տրեխ, որին գիւղացիներն ասում են «չարուխ», որը պատրաստում են այսպէս. եզան կամ կովի կաշւի վրայ գտնւած մազերն ածիլում և ոտների մեծութեամբ կտրում, եզրերին օղակներ շինում, որոնց միջերից անց կացնում են բրդեայ թելէ կապիճներ: Այնուհետև ոտները կաշիների վրայ դնելով՝ խաչածն ամրացնում են կապիճներով:

Ամառը գուլպայ չեն գործածում. հագնում են պարսկական «գիվա», որին կոչում են «թալա»:

Կանանց զգեստը

Շապիկ. — Պառու կանանց շապիկը երկար է և իշնում է մինչև ոտները. կարում են առաւելապէս աղքատները կարմիր ներկած կտաւից, իսկ հարուստներն ու միջակները՝ սատողաֆէյից (սուտ դանաւազից): Շապիկ առջևի ելակացող մասն ամբողջապէս կարմիր կտու է, իսկ ետևի մասը՝ ճերմակ. կուրծքը մինչև պորտը բաց է և եզրերը զարդարած են զառով. կոճկում է կոկորդի տակ, արծաթեայ մի դուռնանոցով կամ 10 շայանոցով. թևերը լայն են և երկար: Իսկ ջահէլ հարսների ու աղջիկների շապիկը կարճ է. իշնում է պորտից մի մասա նաչափ ցած. կուրծքը կոկորդի տակից մինչև պորտը բաց է և կոճկում է սատափէ չորս կոճկաներով. թևերը լայն են և մինչև կանգունները կարած են սպիտակ կտորից, ապա նրա

ծայրերին միացած են կարմիր կտորից վերջաւորութիւններ, որոնք հասնում են մինչև դաստակները:

Թուռմբան. — Կարում են ծնկներից չորս մաս վեր և ճերմակ քաթանից, ապա նոր ծայրերին միացնում են երկրորդական վերջաւորութիւններ զանաւուզից: Վերին ծայրը յետ է դարձած, որի միջից բամբակէ թելերից ոլորած խոնջան անցկացնում և կապում են առջևից, իսկ ցածի եզրերը զարդարում են շինակով (սև թելից են պատրաստում), ապա երկու մաս վերև թակալում են ճերմակ թելերով. ունի մի թիվ լայնութիւն:

Ուրկա. — Դասակի վրայից հագնում են ուրկա, որ բաղկացած է երկու մասից, վերին՝ որ նեղ է և զրկում է ամբողջ իրանը. թևեր չունի, կոճկում է կրծքի վրայից, ութն արծաթեայ կամ սատափէ կոճակներով. իսկ ներքևի մասը, որ մանր «չիններով» միացած է վերևի հետ, լայն շրջագծես է: Ընդհանրապէս ուրկա հագնում են աղջիկներն ու հարսները. կարում են շամի կտորից, չթից և սատաղափայից:

Չինդար. — Ուրկայի վրայից հագնում են չինդար. սա նման է ուրկին, միայն թևերով է. կարում են՝ հարուստները չինիխաթայից, մետաքսէ կտորից և չթից, իսկ միջակներն ու աղքատները՝ զանաւուզից և չթից: Չինդարի վերևի մասը նեղ է և զրկում է ամբողջ իրանը. կոճկում է կոկորդի տակից մինչև պորտը, ութը հատ արծաթեայ 10 շայանոցով կամ չափաւոր ստով, որին տեղացիները կոչում են «ջուֆտ», դրանք կեն և օղակաձև արծաթեայ կոճակներ են, իւրաքանչիւր կողմը կարած է 12 շուֆտ, որոնց կողքերը զարդարած են նւարով, թօռով կամ զառով. իսկ ցածի մասը լայն է, որի շուրջը նոյնպէս զարդարած է զառով, նւարով կամ թօռով. ունի մինչև դաստակը հասնող թևեր, որոնք կարած են մինչև կանգունը, ապա բացում են և կոճկում դաստակների վերայ, 2-3 կոճակներով:

Գօտի. — Չինդարի վրայից, մէջքին կապում են գօտի, որը պատրաստում են կարմիր ներկած բրդից կամ նարնջի կտորից. ընդհանրապէս կապում են աղքատները, որի երկարութիւնն է 2-3 զաղ, իսկ լայնութիւնը՝ քառորդ զաղ: Գօտին՝ փաթաթում են մի քանի անգամ, յետոյ առջևում մի հանգոյց ձգում և ապա ծայրերն ամրացնում են կողքերին: Հարուստները կապում են արծաթէ քամար:

Կարմիր գոգնոց. — Կրում են չինդարի վր-

րայից, որ հասնում է վզից մինչև ոտաթաթը. վերին մասը կապում են վզի ետևից, իսկ ցածի երկու կողերին ամրացնում են երկու թելեր, որոնց ետևի կողմից առաջ բերելով՝ կապում են պորտի վրայից. կարում են զանաւուզից, սատաղափայից և չիլայից. թևեր չունի: Հարս-



Չահարմաթալի կիմը իր ուրոյմ տարագով

ներն իրենց գոգնոցների կուրծքն ասեղնագործում են:

Քուշալա. — Հագնում են գոգնոցի վրայից և հասնում է մինչև ծնկատակը. կարում են նարնջից կամ մահուդից. նարինջը զարդարում են թօռով, իսկ մահուդը՝ զառով. կրծքից մինչև ծնկատակը բաց է. թևերը կարծ են և հասնում են մինչև արմուկները. ընդհանրապէս թևերի տակ փոքրիկ բացւածքներ են թողնում, որպէս զի օդ խաղայ և չորտնի:

Ալխաւուղ. — Հագնում են շապկի վրայից. հասնում է մինչև ծնկները. հարուստներն ու միջակները կարում են դալամքարից, իսկ աղքատները՝ շամի չթից. թևերը մինչև դաստակները կարած են, ապա կոճկում են դաստակների վրայ: Ալխաւուղի առջևի մասը միանգամայն բաց է և կոճկում է պորտի վրայ մի արծաթէ կոճակով. այդ բացւածքի եզրերը զարդարած են կաղնաձև արծաթեայ 32 կոճակներով:

թափալիք. — Պառաւ կանայք աշխարհի վերայից հագնուած են թափալէ. կարում են՝ հարուստներն ու միջակները եւրոպական կտորներէց, իսկ աղքատները՝ չթից. հասնում է մինչև ոտաթափը. կոճկուած է պորտի վրայից արծաթէ չփոռով. թեւերը կարած են մինչև արմուշկները, ապա բաց են և կոճկուած են դաստակների վրայ արծաթէ կամ ստառֆէ կոճակներով. ընդհանրապէս թափալէյի բոլոր եզրերը պատում են ստառադափէով:

Իջոյիկ. — Սովորաբար բոլոր կանայք, հարսներն ու աղջիկներն ամառ ժամանակ ոտաբոբիկ են ման գալիս. միայն հիւր կամ ուխտի գնալիս կոշիկ են հագնում, իսկ ձմեռը հագնում են նախ գուլպա, ապա՝ մաշիկ, որի ծայրերը սրածայր են և կեռ. գնում են գիւղում գտնուող մաշկակարներից:

Գլխի յարդարանք եւ զարդեր

Շուշտակ. — Իւրաքանչիւր շաբաթ օր կանայք լւանում են իրենց գլուխները, մազերսին մէջտեղից երկուսի բաժանում և ութը ծած են շինում, ապա դնում են շուշտակը. դա վեղարածն է կարած սպիտակ կամ կարմիր մի քաթան է, որի ցածի եզրերը կարած են միմեանց, որոտեղից ծամերը դուրս են գցում. ունի երկու կէս գազ երկարութեամբ բամբակէ թելեր, որոնց ծամերի տակից գազաթի վրայ բերելով՝ կապում են:

Տկալալիկ. — Սա սպիտակ, եռանկիւնաձև կարած մի չլար է, որ ձգում են շուշտակի վրայից, ապա բիկ տակով անցկացնում և մայրերն ամրացնում են զազաթին:

Եախաւմ. — Սա քառանկիւնի մալմալ կտոր է, որ եռանկիւնաձև ծալելով՝ բերանի վրայով ծածկում են և կապում գլխի ետեւից:

Բալիշ. — Բամբակը դնում են չլարէ չորի մէջ և քառակուսի մի փոքրիկ բարձ շինում, որի երկու ծայրերին միննուն կտորից թելեր կարում, ապա բարձը գնում են զազաթի վրայ և թելերը ծնոտի տակից կապում:

Գալիկ. — Հասարակ կտորից կարած մի գլխարկ է. որի առջևի, ճակատի մասը, զարդարւած է պարսկական 30 ղոանանոցներով. գլխարկի մէջտեղը միակզամայն բաց է և ունի մի կարթ (չէնիկէ), որն ամրացնում են բալիշին, որպէս զի պահպանէ գլուխը:

Փօյ. — Իւրաքանչիւր կնոջ զազաթի համաձայն պատրաստւած «մուղավայէ» թղթից

կամ հին նամադից շինւած կլոր, մօտ մի վերջունի լայնութեամբ, գլխարկ է, որի վրայ քաթանէ չոր են քաշում և դնում արևի տակ չորացնում, ապա զօդի առջևի մասում մետաքսէ մի թաշկինակ են կապում, որին կոչում են «ճակովկապ». սրա վրայ շարում են թաթռնիկները, որոնց գլխաւոր մասերն են. 10 բշտեր, 26 ձկնաձև արծաթներ և 26 թթեր:

Յէրևանց. — Սա 4-5 թուման արժողութեամբ արծաթեայ զարդարանք է, որ բաղկացած է հետեւեալ մասերից. 10 մեծ ու կլոր և 10 փոքրիկ բշտեր, որոնց ծայրերին միացնւած է կարթեր. յէրեսնոցը ծոճարկի տակից գազաթի վրայ տանելով՝ կարթերն ամրացնում են բալիշին. Բացի յիշեալ կարթերից, մի կարթ էլ կայ վզի տակ, որ ամրացնում են եախաւմին:

Տկալալիկ. — Կարում են չլարից և եռանկիւնաձև ծալելով՝ գցում են գոտու վրայից:

Մենձ լալիկ. — Եռանկիւնաձև ծալելով՝ կապում են տկալալիկի վրայ, ապա ծոճարկի տակից անցկացնելով՝ ծայրերը հանգուստում են գլխի վրայ, և ուսերի վրայից ձգում են ետեւը և ծայրերն իրար կապում, որ հասնում է մինչև մէջք: Այնուհետև «շրդլղան» երկու կողմից անց են անցնում լաշիկի վրայ: Չրդլղան երեք մասից է բաղկացած. 4 բշտեր, 7 կազաններ և 14 թթեր:

Աղջիկները հագնում են կանանց նման, միայն գլխի փաթաթանք չունեն: Նրանք մազերսին ճիշտ մէջտեղից սանտրում և հինգ կամ եօթը (կէսն) ծած շինում, ապա մի թաշկինակ եռանկիւնաձև ծալում, ձգում են գլուխներին և ծայրերը ականջի վրայով տանում և հանգուստում են ծոճարկի տակով: Իսկ աւելի փոքրերը դնում են ասեղնազործած գլխարկ, որի առջևի՝ ճակատի վրայ կնոջ մասը, զարդարում են պարսկական 14 հատ ղոանանոցներով: Կապում են ծոճարկի տակից բամբակէ թելերով կամ բաշիկերով:

Հարսներն ու աղջիկները վզներից մինչև պորտը գցում են «վզնոց». դա սրտաձև ճերմակ, կանաչ, դեղին և կապույտ ուլունքներով պնդւած մի զարդարանք է, որի արժէքն է 20-25 թուման: Բաղկացած է չորս շարքից. ամէն մի շարքի վրայ շարւած են պարսկական 12 հատ մի կամ երկու ղոանանոցներ: Իսկ կանայք իրենց կրծքի վրայ գցում են «ճտնոց». դա բաղկացած է երկու շարանից, որոնցից իւրաքանչիւրի վրայ շարւած են պարսկական 20 հատ երկու ղոանանոցներ:

Կանայք և հարսները մատներին դնում են ոսկէ կամ արծաթէ մատանիներ. աղջիկները գատակներին անցկացնում են «ապրջան» կամ բրդից գործած թելի վրայ երկու շարք շարած գոյնզգոյն ուլունքներ:

Վիհինա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

Ժ.

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆԺՆ

(Շար. տես Բազմ. 1923 էջ 328)

Թ.

ԲԱՌԱԿԱՐԳ ԱՄԻՐՏՈՒՎԱԹԻ

335րդ Թուահամարը կրող ձեռագիրն է սա. ունի Բասակարց Ամիրտուվաթի վերանագիրը, բայց է այս՝ բժիշկին Անգիտաց Անգիտին մէկ ուրիշ օրինակը:

Յիշատակութեան արժանի ոչ մէկ բան չի ներկայացնել. պակասաւոր և անթուա կան ընդօրինակութիւն մ'է, առանց ո՛ր և է Յիշատակարանի. գիրը նոսր է, ոչ այնչափ զեղեցիկ՝ բայց ընթեռնելի. գրուած թիւնը ընդհանրապէս միասին է, և տեղ տեղ ալ երկսին. թուղթը բամբակեայ է. ամբողջը 127 թերթ է 254 էջ գրութեամբ. կազմը լաւ է և կաշի. մեծութիւնն է 21 հր.մեղր, լայնութիւնը 15 հր.մեղր, իսկ թանձրութիւնը 4 հր.մեղր:

Կը սկսի Ասալուսան վառվռոյ բառով, և կը վերջացնէ ֆուֆալով, և ապա դարձեալ կը շարունակէ նոր բառակարգ մը, որուն պարունակութիւնն ալ նոյնն է, կրնանք ըսել թէ առաջինին կրկնութիւնն է:

Եւ ցաւալի է յոյժ, որ այսպիսի ընդօրինակութիւններ՝ որոնք կրնային ուրիշ օրինակներու բաղդատութեան օգտակար հանդիսանալ՝ զուրկ են յիշատակութիւն ներէ. ընդօրինակութեան մը տեղը, թուա-

կանը, գրիչին անունը մեծապէս կ'ազդեն օրինակին արժէքին վրայ և զայն այլապէս յարգի կ'ընծայեն:

ԲԱՌԳԻՐՔ ԱՄԻՐՏՈՒՎԱԹԱՅ

Սա ևս Ամիրտուվաթայ Անգիտաց Անգիտին մէկ ուրիշ օրինակն է, իր հնուածեամբը վարդ Մարիշգիի բժշկարանէն յետոյ դասելի, որովհետեւ 1662 թուա. կանին է գրուած:

Անգիտանութիւնն եղած է գրասէր և գրավատակ Տիւզեան Յակոբ Ձէլէպիին, որ Ս. Ղազարու գրատունին նուիրած է զայն 1826 Դեկտեմբերի 26ին, ինչպէս կը կարդանք հատորին վախճանը:

Մեծկակ հատոր մ'է, թէև լի տառասըխալներով և խեղաթիւրուած տողերով ու պարբերութիւններով:

Կաշէկազմ է՝ լաւ հանգամանքներու մէջ պահուած. թուղթն է ընտիր բամբակեայ, գիրը նոսր, ընթեռնելի և երկսին: Մեծութիւնն է՝ 21 հր. մեղր, լայնքը 15 հր. մեղր, իսկ թանձրութիւնը 6,5 հր. մեղր: Ունի 760 էջ գրութիւն և 387 թերթ, որոնց վերջի եօթը՝ բոլորովին պարապ են: Չեռագիրը կը սկսի Անգիտաց Անգիտին ծանօթ Յառաջարանութեամբ, և կը պաւունակէ Ամիրտուվաթի Յիշատակարան. ներք իսկութեամբ, զորս ներկայացուցած եմ Երկրորդ Ձեռագրին առթիւ:

Ապա կու գայ ամբողջ աշխատութիւնը, որ կ'աւարտի 759րդ էջով, և ուր կը կարդանք դարձեալ Ամիրտուվաթի Ոսանաւոր — Յիշատակարանը, որով կը կնքուի Ձեռագիրը:

Այս Ոսանաւորէն անմիջապէս վերջը կը կարդանք Յիշատակութիւնը, թէ ընդօրինակութիւնն եղած է 1662ին, զի կը գրէ:

«ԳԻՅՅԱՒ ԹՎԻՆ ՌՃԺԱ (1111 551 = 1662) ԱՐԲԻԼԻ Դ, ՕՐՆ ՈՐԲԱԹ».

Իայց ընդօրինակիչին անունը չի կայ,